ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» նոյեմբերի 2015թ. N ____- Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 08-Ի N 392-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 5-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 08-ի «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» N392-Ա որոշման 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Տալ համաձայնություն «Ինտեր Ասոցիացիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և Գոհար Առաքելյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման 16.11.2015թ. N16112015-01-0058 վկայական) Երևանի Զաքյան փողոցի հ.5/7 հասցեում գտնվող 0.03717 հա մակերեսով հողամասից 0.03027 հա հողամասը Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Երևանի Զաքյան փողոցի հ.5 հասցեի հարևանությամբ գտնվող 0.011414 հա մակերեսով հողամասի հետ փոխանակելու համար:»:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 08-Ի N 392-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու 08.10.2015 թվականի N 392-Ա որոշման ընդունման համար հիմք է հանդիսացել «Ինտեր ասոցիացիա» ՍՊԸ-ի և Գոհար Առաքելյանի անվամբ 18.03.2009 թվականին տրված անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման N 2564495 վկայականում նշված և վերջիններիս անվամբ Զաքյան փողոցի հ.5/3 և հ.5/4 հասցեներով գրանցված 0.04501 հա բաժնային սեփականություն հանդիսացող հողամասի տվյալները:

Զաքյան փողոցի հ.5/3 և հ.5/4 հասցեներին տրամադրվել է նոր հասցե՝ Զաքյան 5/7, որի հիման վրա «Ինտեր ասոցիացիա» ՍՊԸ-ն և Գոհար Առաքելյանը վերագրանցել են իրեն բաժնային սեփականության իրավունքով պատկանող վերը նշված հողամասը և 16.11.2015թ. տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N16112015-01-0058 վկայականի համաձայն՝ բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասի չափը կազմել է 0.03717 հա:

Ելնելով վերոգրյալից, անհրաժեշտություն է առաջացել Երևան քաղաքի ավագանու քննարկմանը ներկայացնել սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 08-Ի N 392-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 08-ի N 392-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 08-Ի N 392-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 08-ի N 392-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ